



## ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ,  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ\*. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ԿԵՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1998 թվականից ՀՀ հանրակրթության ոլորտում ընթացող կառուցվածքային բարեփոխումների բաղկացուցիչ մաս է կազմել պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման նոր՝ ըստ սովորողների թվի մեխանիզմի ներդրումը: Վերջինիս ներմուծմամբ դպրոցների պետական բյուջեի տնտեսագիտական հողվածներով ֆինանսավորման մեթոդից անցում է կատարվել ամբողջական թվով ֆինանսավորման մեխանիզմին, ըստ որի հանրակրթական դպրոցին հատկացվող տարեկան գումարի չափը հաշվարկվում է որոշակի բանաձևով՝ ելնելով հաստատության սովորողների թվից և պահպանման համար անհրաժեշտ ծախսերից:

Սույն հողվածում ներկայացվում են հանրակրթական դպրոցները համապատասխան բանաձևով ֆինանսավորելու տեսական հիմքերը, սկզբունքները և մեթոդաբանությունը, ինչպես նաև ֆինանսավորման նոր մեխանիզմի ներդրման ու կիրառման միջազգային փորձի ուսումնասիրության ամփոփ գնահատականները:

Ուսումնասիրվել են նաև Հայաստանում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի ներդրման նպատակը, խնդիրները, բանաձևի մշակման մեթոդաբանությունը, հիմնական սկզբունքները, ակնկալվող արդյունքներն ու առավելությունները, ինչպես նաև դրա կիրառման գրեթե 20-ամյա փորձի վերլուծությանը բացահայտված խնդիրներն ու թերությունները: Արվել են առաջարկություններ բանաձևի բարելավման ուղղությամբ:

\* Սկիզբը՝ նախորդ համարում:

**Հիմնաբառեր.** *կրթության համակարգ, ֆինանսավորման բանաձև, ըստ սովորողների թվի ֆինանսավորում, կարիքների վրա հիմնված ֆինանսավորում, ֆինանսավորման սկզբունքներ, կրթության որակ, հանրակրթական դպրոց, դպրոցի արդյունավետություն, սովորողների թիվ, դպրոցի չափ, դպրոցի գտնվելու վայր, դպրոցի պահպանման ծախսեր, ազգային փոքրամասնություններ*

JEL: I21, I22, I25, C13, H52, H75

### **1. Հայաստանում ֆինանսավորման նոր համակարգի ներդրման նպատակները**

1998 թվականից Հայաստանի հանրակրթության համակարգում իրականացվող կառուցվածքային բարեփոխումների բաղկացուցիչ մաս է կազմում պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ դպրոցների) ֆինանսավորման նոր մեխանիզմի ներդրումը, համաձայն որի դպրոցի պետական բյուջեի տնտեսագիտական հոդվածներով ֆինանսավորման մեթոդից անցում է կատարվել ամբողջական թվով ֆինանսավորմանը: Այս դեպքում դպրոցին հատկացվող տարեկան գումարի չափը հաշվարկվում է ըստ մեկ սովորողի հաշվով կատարվող ծախսի, սովորողների թվի և դպրոցական շենքի շահագործման համար անհրաժեշտ ընթացիկ ծախսերի:

Նախքան սովորողների թվով ֆինանսավորման անցնելը, դպրոցներին տրամադրվող գումարները բաշխվում էին ըստ պետական բյուջեով հաստատված տնտեսագիտական հոդվածների: Ֆինանսավորման այդ ձևը արդյունավետ չէր, քանի որ դպրոցին հատկացվող գումարի չափը հաշվարկվում և հատկացվում էր համալրված դասարանների և ուսուցիչների թվին, կոմունալ և այլ տնտեսական ծախսերի տեսակներին համապատասխան: Ուստի դպրոցը չէր կարող ինքնուրույն վերաբաշխել իր խնայողությունները բյուջետային տողերի միջև: Ըստ այդմ՝ դպրոցներն իրենց հատկացված միջոցների ծախսման արդյունավետության մեջ հետաքրքրված չէին:

Ըստ սովորողների թվի բանաձևով ֆինանսավորման նոր համակարգի ներդրումը Հայաստանում հետապնդում էր հետևյալ հիմնական նպատակները<sup>1</sup>.

- բարձրացնել պետական բյուջեի գումարների հաշվարկման և միջոցների բաշխման գործընթացի թափանցիկության, արդարության, կանխատեսելիության աստիճանը, կրճատել բանակցությունների վրա ծախսվող ժամանակը՝ նվազեցնելով սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը,
- ապահովել յուրաքանչյուր սովորողի պարտադիր կրթությունն իրականացնելու՝ պետականորեն հաստատված գումարի հատկացումը,
- մեծացնել դպրոցների՝ իրենց հատկացվող բյուջետային միջոցների ծախսման արդյունավետությունն ու նպատակայնությունը՝ վերապահելով ծախսային առաջնայնությունների շուրջ որոշումների ընդունումը դպրոցի վարչական կազմին և կառավարման խորհրդին,

<sup>1</sup> Տե՛ս **Կ. Հարությունյան**, ՀՀ հանրակրթության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղությունների վերլուծությունը, Եր., «Մանկավարժություն», 2005 թ., 4-րդ հ., էջ 12:

- մեծացնել դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության ինքնուրույնությունը՝ հնարավորություն տալով ինքնուրույն կազմելու տարեկան նախահաշիվը (բյուջեն), պլանավորելու սեփական եկամուտներն ու ծախսերը, արդյունավետ կատարելու այդ ծախսերը, ձևավորելու խնայողություններ և նպատակային վերաբաշխելու դրանք,
- նպաստել ներդպրոցական արդյունավետության հիմնական ցուցանիշների (դասարանների միջին խտություն, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-սպասարկող անձնակազմ հարաբերություններ, ուսուցիչների միջին աշխատավարձ և այլն) բարելավմանը,
- խթանել միջդպրոցական մրցակցությունը, մեծացնել համայնքի և ծնողների մասնակցությունը՝ ապահովելով նրանց՝ դպրոցական միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողությունը,
- խրախուսել արտաբյուջետային միջոցների ներգրավումը:

## ***2. Հայաստանում ֆինանսավորման նոր համակարգի ներդրման փուլերը<sup>2</sup>***

Հայաստանում ֆինանսավորման նոր համակարգի ներդրումը սկսվեց 1998 թվականին՝ փորձնական փուլով<sup>3</sup>, որում ընդգրկվեց դպրոցների մոտ 10 տոկոսը (154 դպրոց):

Փորձնական փուլի արդյունքների ամփոփումից հետո, ՀՀ Կառավարության սահմանած ժամանակացույցի համաձայն,<sup>4</sup> սկսվեց հանրապետության բոլոր դպրոցների աստիճանական անցումը ֆինանսավորման նոր համակարգին, որն ավարտվեց 2004 թվականին:

Ըստ սովորողների թվի ֆինանսավորման մեխանիզմին անցումը զուգակցվեց դպրոցների ինքնավարության աստիճանի բարձրացմամբ: Մասնավորապես՝ դպրոցները ստացան իրավաբանական անձի կարգավիճակ և բյուջետային հիմնարկներից վերակազմավորվեցին պետական ոչ առևտրային կազմակերպությունների: Նոր կարգավիճակը դպրոցներին թույլ տվեց ունենալ սեփական բանկային հաշիվ, հաշվեկշիռ, առանձնացված գույք, ինչպես նաև ձևավորել տարեկան բյուջե և ծախսել հատկացված գումարները՝ համաձայն այդ բյուջեի: Բացի այդ, ֆինանսավորման նոր մեխանիզմն ուղեկցվեց դպրոցներում կառավարման նոր մարմնի՝ դպրոցական խորհրդի ստեղծմամբ: Վերջիններս ստանձնեցին մի շարք կառավարչական գործառույթներ, այդ թվում՝ դպրոցի տարեկան բյուջեի ձևավորման և ծախսերի նկատմամբ վերահսկողության իրավասությունը:

<sup>2</sup> Տե՛ս **Կ. Հարությունյան, Հ. Մաղաքյան, Վ. Հարությունյան**, Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի բարելավման ուղղությամբ առաջարկություններ, Եր., «Մանկավարժություն», 2012 թ., 4-րդ հ., էջ 5–17: **Կ. Հարությունյան, Հ. Մաղաքյան, Վ. Հարությունյան**, Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի ներդրումն ու կիրառումը, Եր., «Մանկավարժություն», 2012 թ., 2-րդ հ., էջ 5–16:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 28.10.1998 թ. N661 որոշումը «Պետական հանրակրթական դպրոցների համակարգի հետագա ապակենտրոնացման մասին» և ՀՀ Կառավարության 01.06.1999 թ. N377 որոշումը «ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագիրը հաստատելու մասին»:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 12.10.2000 թ. N634 որոշումը «ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագրի հետագա ընթացքի մասին»:

### **3. Հայաստանում ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի մեթոդաբանությունը**

Մինչև սովորողների թվով ֆինանսավորման բանաձևի ներդրումը, քննարկվեցին և մշակվեցին մեթոդաբանության ստորև նկարագրված երկու հնարավոր տարբերակները:

1. Հաշվարկել մեկ սովորողին հատկացվող տարեկան գումարի չափը՝ ելնելով սովորողի պարտադիր կրթությունն ապահովելու համար անհրաժեշտ իրական ծախսերից: Սասնավորապես՝ ձևավորել բանաձևի հիմնական անդամներն ու գործակիցները, այդ թվում՝ մեկ սովորողին տրամադրվող տարեկան գումարի չափը՝ ելնելով սահմանված նորմատիվներից, աշխատավարձերի իրատեսական չափերից ու հարկերից, կոմունալ ծախսերի սակագներից (էլեկտրաէներգիա, ջուր, ջեռուցում, հեռախոս և այլն) և այլ տնտեսական ծախսերի միջին շուկայական գներից: Դրանց հիման վրա հաշվարկել յուրաքանչյուր դպրոցին հատկացվող տարեկան գումարի ընդհանուր չափը, ինչպես նաև պետական բյուջեից դպրոցներին հատկացվելիք տարեկան ընդհանուր գումարը:

2. Հիմք ընդունել պետական բյուջեից դպրոցների համար նախատեսված առավելագույն գումարը և մշակել դրա առավել արդար ու արդյունավետ բաշխման մեթոդ ու բանաձև:

Առաջին տարբերակի կիրառման ժամանակ հաշվարկներում օգտագործվեցին օրենսդրորեն գործող բոլոր նորմերը, պետականորեն սահմանված սակագները և այդ պահին հնարավորինս նպաստավոր աշխատավարձերի չափերը: Սակայն հաշվարկները ցույց տվեցին, որ այս տարբերակի կիրառման դեպքում գումարի այն չափը, որն անհրաժեշտ կլինի պետական բյուջեից դպրոցները ֆինանսավորելու համար, մի քանի անգամ գերազանցում է պետական բյուջեի հնարավորությունները: Այդ պատճառով ընտրվեց երկրորդ մոտեցումը, այն է՝ ելնել պետական բյուջեով դպրոցների համար նախատեսված առավելագույն գումարի չափից:

### **4. Ֆինանսավորման նոր համակարգի սկզբունքները Հայաստանում**

Ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի մշակման և կիրառման հիմքում դրվեցին հետևյալ սկզբունքները.

- դպրոցները պետք է ֆինանսավորվեն ամբողջական գումարով՝ առանց տնտեսագիտական հողվածների դասակարգման, և յուրաքանչյուր դպրոցին հասանելիք գումարի չափը պետք է հաշվարկվի հստակ սահմանված բանաձևով,
- յուրաքանչյուր դպրոց իրեն հատկացված ամբողջական գումարի շրջանակներում պետք է ինքնուրույն կազմի իր տարեկան ծախսերի նախահաշիվը (բյուջեն)՝ ելնելով սեփական խնդիրներից ու կարիքներից,
- դպրոցների ֆինանսավորման բանաձևը պետք է ուղիղ համեմատական կապ հաստատի տվյալ դպրոցին հատկացվող ընդհանուր գումարի և դպրոցի սովորողների թվի միջև՝ ներառելով 2 հաստատում՝ մեկ սովորողին հասանելիք գումարի և դպրոցի պահպանման համար հատկացվող գումարի չափերը,

- մեկ սովորողին հասանելիք գումարի և դպրոցի պահպանման համար տրամադրվող գումարի չափերը պետք է որոշվեն՝ ելնելով տվյալ ֆինանսական տարում պետական բյուջեից հանրակրթության ոլորտին հատկացվող գումարի չափից, միևնույն ժամանակ պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերվի դպրոցների որոշակի խմբերի նկատմամբ (օրինակ՝ փոքր և բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներ)՝ կիրառելով որոշակի գործակիցներ դպրոցների նշված խմբերի համար,
- մեկ սովորողին հասանելիք գումարի չափը պետք է հիմնավորված լինի և որոշվի ըստ պետականորեն սահմանված նորմատիվների, կրթական ծրագրերի և աշխատավարձի չափերի,
- մեկ սովորողին հասանելիք գումարը պետք է «հետևի» սովորողին,
- դպրոցի կազմած տարեկան նախահաշիվը պետք է հաստատվի իր կառավարման խորհրդի կողմից,
- դպրոցը պետք է ծախսի իրեն հատկացված տարեկան գումարը՝ համաձայն հաստատված նախահաշվի, իսկ վերջինիս մեջ անհրաժեշտ փոփոխությունները պետք է կատարի իր կառավարման խորհրդի որոշմամբ,
- դպրոցը, լինելով իրավաբանական անձ, պետք է բյուջետային միջոցները ստանա իր բանկային հաշվին՝ պետական գանձապետական համակարգից ուղղակի փոխանցման միջոցով,
- դպրոցը պետք է հաշվետու լինի իր կողմից կատարված ծախսերի վերաբերյալ՝ պետականորեն սահմանված կարգով կանոնավոր կերպով կազմելով և ներկայացնելով ֆինանսական հաշվետվություններ,
- պետք է առանձնացնել պետության համար ռազմավարական նշանակություն և աշակերտական փոքր համակազմ ունեցող դպրոցները՝ դիտարկելով դրանք որպես «պաշտպանված դպրոցներ», նաև երաշխավորել, որ ֆինանսավորման նոր համակարգին անցման պայմաններում դրանց հատկացվող բյուջետային միջոցների չափը չի նվազի:

##### **5. Ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի կիրառությունը Հայաստանում**

Հայաստանում սովորողների թվով ֆինանսավորման բանաձևի կիրառումը սկսվեց 1999 թվականին<sup>5</sup>: Ըստ այդմ՝ դպրոցներին հատկացվող բյուջետային միջոցների հաշվարկման համար սահմանվեց հետևյալ բանաձևը.

$$Dq = Up \times Uq + \text{Պգ},$$

որտեղ՝  $Dq$ -ն մեկ օրացուցային տարվա համար դպրոցին հատկացվող ընդհանուր գումարն է,

$Up$ -ն՝ դպրոցի սովորողների թիվը,

$Uq$ -ն՝ մեկ սովորողին հատկացվող տարեկան գումարը,


$\text{Պգ}$ -ն՝ դպրոցի պահպանման ծախսերի տարեկան նվազագույն գումարը:

Ֆինանսավորման այս բանաձևը ստացվեց փորձնական ծրագրում ընդգրկված 154 դպրոցների երկու տիպի տվյալների՝ յուրաքանչյուր դպրոցում

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 01.06.1999 թ. N377 որոշումը «ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագիրը հաստատելու մասին»:

սովորողների փաստացի թվի և ֆինանսավորման նախկին համակարգով յուրաքանչյուրին հատկացված փաստացի տարեկան գումարների միջև ռեգրեսիոն կապը գտնելու ճանապարհով: Այդ կապը լավագույնս մոտարկվեց վերը նշված բանաձևով (գծապատկեր 1):

Ինչպես ցանկացած գծային ռեգրեսիոն կապի հավասարում, այս դեպքում ևս ստացված  $\text{Ըգ} = \text{Սթ} \times \text{Սգ} + \text{Պգ}$  հավասարման պատկերը ուղիղ գիծ էր, որը ցույց էր տալիս, որ դպրոցին հատկացվող տարեկան գումարի և դպրոցի սովորողների թվի միջև գործում է ուղիղ համեմատական կապ, այսինքն՝ որքան շատ է դպրոցում սովորողների թիվը, այնքան դպրոցին ավելի մեծ գումար է հատկացվում:



**Գծապատկեր 1.** Փորձնական ծրագրում ընդգրկված դպրոցների սովորողների թվի և այդ դպրոցներին հատկացված տարեկան ընդհանուր գումարների միջև ռեգրեսիոն կապը

Գծային ռեգրեսիոն հավասարման ստացումից հետո պարզ դարձավ, որ դպրոցների մի մասը գտնվում է ստացված ուղիղ գծից ներքև (իրենց հատկացվող տարեկան գումարի առումով), իսկ մյուս մասը՝ վերև (գծապատկեր 1): Ակնհայտ էր, որ բանաձևի կիրարկման դեպքում գծից ներքև գտնվող դպրոցները «կշահեն», քանի որ կսկսեն ավելի մեծ չափով ֆինանսավորում ստանալ, իսկ գծից վերև գտնվող դպրոցները «կտուժեն», քանի որ դրանց ֆինանսավորումը կնվազի: Ուստի, որպեսզի ֆինանսավորման նոր համակարգին անցման պարագայում ոչ մի դպրոց ֆինանսապես ավելի վատ վիճակում չհայտնվի, և բոլորը ֆինանսավորվեն բանաձևով հաշվարկված ճշգրիտ չափով, որդեգրվեցին հետևյալ սկզբունքները.

- այն դպրոցների պարագայում, որոնք գտնվում են ստացված ուղիղ գծից վերև, այսինքն՝ դրանց պետական բյուջեից հատկացվող տարեկան գումարը ֆինանսավորման նախկին ձևի ժամանակ ավելի մեծ էր, քան բանաձևի ներդրման պայմաններում է (ավելի էր միջին մոտարկված մեծությունից), հատկացվող տարեկան գումարի չափը չպետք է նվազի. պետք է պահպանվի նույն ծավալով,
- այն դպրոցների պարագայում, որոնք գտնվում են ստացված ուղիղ գծից ներքև, այսինքն՝ դրանց՝ պետական բյուջեից հատկացվող տա-

րեկան գումարը ֆինանսավորման նախկին ձևի ժամանակ ավելի փոքր էր, քան բանաձևի ներդրման պայմաններում է (փոքր էր միջին մոտարկված մեծությունից), հատկացվող տարեկան գումարի չափը պետք է ավելացվի. պետք է նախատեսվեն լրացուցիչ միջոցներ:

Ուստի բանաձևի կիրառման առաջին տարիներին պետական բյուջեում նախատեսվեցին անցումային շրջանի ծախսեր, և գծից ներքև գտնվող դպրոցներին հատկացվեց լրացուցիչ ֆինանսավորում՝ տարբերությունը չեզոքացնելու համար: Փաստորեն, այս քայլով համահարթվեցին տարբեր դպրոցների միջև ֆինանսավորման տարբերությունները, և մի քանի տարվա ընթացքում բոլոր դպրոցները՝ ինչպես գծից վերև, այնպես էլ ներքևում գտնվողները, հայտնվեցին հավասարումով ստացվող գծի վրա և սկսեցին ֆինանսավորվել վերոնշյալ բանաձևով հաշվարկված ճշգրիտ գումարի չափով:

**6. Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի և դպրոցի պահպանման ծախսերի գումարի չափերի փոփոխությունները 1999–2013 թթ. ընթացքում**

1999 թվականից հետո, յուրաքանչյուր բյուջետային տարի, մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի (Սգ) և դպրոցի պահպանման ծախսերի գումարի չափերը (Պգ) վերահաշվարկվել են: Ընդհանուր առմամբ, 1999 թվականից մինչև 2009 թվականը, հանրակրթությանը հատկացվող պետբյուջեի միջոցների ավելացմանը զուգահեռ, այդ գումարներն անընդմեջ ավելացվել են՝ բազմապատկվելով հանրակրթության համակարգին տրամադրվող ընդհանուր գումարի աճի գործակցով՝ ճշգրտված աշխատավարձի աճի չափով: Սակայն այդ աճի ցուցանիշը տարբեր տարիներին տարբեր է եղել՝ տատանվելով 0%-ից 47%-ի շրջանակներում:

Միաժամանակ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներին համար բանաձևում ներդրվել են, համապատասխանաբար՝ 1,02 և 1,2 գործակիցները՝ դրանց առանձին ծախսատեսակների գծով առաջացող լրացուցիչ ֆինանսական կարիքները հոգալու նպատակով: Նշված գործակիցները կիրառվել են ինչպես դպրոցի պահպանման ծախսերի, այնպես էլ մեկ աշակերտին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ:

2009 թվականին համաաշխարհային տնտեսական ճգնաժամը ծանր հարված հասցրեց Հայաստանի տնտեսությանը, որի հետևանքով 2009 թվականին գրանցվեց ՀՆԱ մոտ 15%-ի անկում: Բնականաբար, կրճատվեցին ինչպես ընդհանուր բյուջետային ծախսերը, այնպես էլ դպրոցներին հատկացվող գումարները: Արդյունքում՝ 2010 թվականին դպրոցի պահպանման ծախսերի համար հատկացվող տարեկան գումարի չափը նվազեց 12,9%-ով, իսկ մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի չափը պահպանվեց նախորդ տարվա չափով:

Հաջորդող երեք տարիների ընթացքում՝ 2011–2013 թվականներին, երկրի տնտեսական վիճակը որոշակիորեն բարելավվեց, և մեկ սովորողին բաժին ընկնող գումարի չափն ավելացվեց մոտ 5%-ով, իսկ դպրոցի պահպանման ծախսերի գումարը՝ մոտ 9%-ով: Վերջինս 2013 թվականին կազմեց 16876.0 հազ. դրամ, սակայն չհասավ իր նախաձգնաժամային չափին՝ 18200.0 հազ. դրամին:

Աղյուսակ 1-ում ներկայացված է մեկ սովորողին հասանելիք և դպրոցի պահպանման ծախսերի համար հատկացվող տարեկան գումարի փոփոխության շարժընթացը 1999–2013 թթ.<sup>6</sup>:


Աղյուսակ 1

Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարը, դպրոցի պահպանման գումարը և դրանց փոփոխության շարժընթացը 1999–2013 թթ.

| Տարեթիվ | Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարը (դրամ) | Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի աճի տոկոսը նախորդ տարվա նկատմամբ (%) | Դպրոցի պահպանման ծախսը (հազ. դրամ) | Դպրոցի պահպանման ծախսի աճի տոկոսը նախորդ տարվա նկատմամբ |
|---------|---|---|------------------------------------|---|
| 1999    | 14000   | –   | 2600.0                             | –   |
| 2000    | 19900   | 35.7  | 2600.0                             | 0   |
| 2001    | 21887   | 10  | 2600.0                             | 0   |
| 2002    | 24348   | 11.2  | 2600.0                             | 0   |
| 2003    | 26764   | 9.9   | 3400.0                             | 30.8  |
| 2004    | 36068   | 34.8  | 4600.0                             | 35.3  |
| 2005    | 51202   | 42.0  | 6600.0                             | 43.5  |
| 2006    | 56876   | 11.1  | 9700.0                             | 47.0  |
| 2007    | 66956   | 17.7  | 11450.0                            | 18.0  |
| 2008    | 78890   | 17.8  | 13500.0                            | 17.9  |
| 2009    | 105775  | 34.1  | 18200.0                            | 34.8  |
| 2010    | 105775  | 0   | 15860.0                            | -12.9   |
| 2011    | 105775  | 0   | 16708.0                            | 8.2   |
| 2012    | 106290  | 0.5   | 16708.0                            | 0   |
| 2013    | 111235  | 4.6   | 16876.0                            | 1   |


Ըստ աղյուսակի տվյալների՝ 1999–2009 թթ. մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի չափն աճել է մոտ 7,5 անգամ, իսկ 2010–2013 թթ.՝ ընդամենը 1,05 անգամ: Դպրոցի պահպանման ծախսերի գումարի չափը 1999–2009 թթ. աճել է 7 անգամ, իսկ 2010–2013 թթ. նվազել է 1,07 անգամ:

Ստորև, ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի, պատկերված են մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի և դպրոցի պահպանման ծախսերի համար հատկացվող տարեկան գումարի չափերի փոփոխությունները 1999–2013 թթ. ընթացքում:



<sup>6</sup> Տվյալները վերցված են ՀՀ ֆինանսների, ինչպես նաև կրթության և գիտության նախարարների 1998–2012 թթ. հրամաններից, որոնցով հաստատվել են ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցները:





**Չժապատկեր 2.** Ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի և դպրոցի պահպանման ծախսերի տարեկան գումարի չափերի փոփոխությունները 1999–2013 թթ.

**7. Պարոցի պահպանման ծախսերի տարեկան նվազագույն գումարը և մեկ սովորողին բաժին ընկնող գումարի իրական չափը**

Հարկ է նշել, որ ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի ազատ անդամը (Պզ) թեև պաշտոնապես անվանվում է «դպրոցի պահպանման ծախս», դպրոցների կողմից չի օգտագործվում միայն իր պահպանման ծախսերը հոգալու համար:


Բանաձևի ներդրումից հետո այս անվանումն առաջ բերեց որոշ անցանկալի հակասություններ: Մեծ դպրոցները դժգոհում էին, որ բանաձևը շահավետ է աշակերտական փոքր համակազմ ունեցող դպրոցների համար, քանի որ պահպանման ծախսերի համար հատկացված գումարը այդ դպրոցներում սովորողների թվի համեմատությամբ մեծ է, իսկ փոքր դպրոցները դժգոհում էին, որ ըստ սովորողների թվի հատկացված գումարը շատ փոքր է, և իրենք ստիպված են դպրոցի պահպանման գումարն օգտագործել նաև ուսուցիչների աշխատավարձերի վճարման նպատակով:

Սակայն այդ մեկնաբանություններից ոչ մեկը ճիշտ չէ: Իրականում դպրոցին հատկացվող տարեկան գումարի (Ըզ) բաժանումը սովորողների թվով հատկացվող ու պահպանման ծախսերի համար տրամադրվող գումարների, խիստ պայմանական է: Դպրոցի ֆինանսավորումը, փաստորեն, ամբողջական գումար է, որը հաշվարկվում է վերոհիշյալ գծային հավասարման բանաձևով, իսկ դպրոցի կողմից բաշխվում է ըստ առանձին ծախսատեսակների՝ սեփական խնդիրներին ու կարիքներին համապատասխան:

Չժապատկեր 3-ում ներկայացված է գումարի այն չափը, որը ստացվում է դպրոցին հատկացվող ամբողջական գումարը պարզապես դպրոցի սովորողների թվի վրա բաժանելով, այսինքն՝ մեկ սովորողին բաժին ընկնող գումարի չափը՝ կախված սովորողների թվից (1999–2007 թթ. բանաձևերի համար):

Նույն գծապատկերից պարզ է դառնում, որ սովորողների փոքր թիվ (մինչև 300 աշակերտ) ունեցող դպրոցներում մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը տարիներ շարունակ անհամեմատ ավելի մեծ է եղել, քան մեծ դպրոցներում:

Այդ իրավիճակն արդյունք էր այն հանգամանքի, որ բանաձևի ազատ անդամը՝ դպրոցի պահպանման ծախսը (Պգ), համեմատաբար մեծ, հաստատուն գումար էր և տարբերակված չէր (մինչև 2104 թվականը) ըստ դպրոցների չափերի: Ավելին, 2005 թվականից հետո այդ տարբերությունը շեշտակիորեն աճեց, քանի որ պետության կողմից բանաձևի ազատ անդամը նկատելիորեն մեծացվեց:



**Փճապատկեր 3.** Մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարը՝ կախված դպրոցի չափից

**8. «Պաշտպանված» դպրոցներ**

2001 թվականին որոշվեց ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևը չկիրառել այն դպրոցների ծախսերը հաշվարկելիս, որոնք դասակարգվում էին որպես պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող՝ «պաշտպանված» դպրոցներ: Դրանք էին սահմանամերձ բնակավայրերում գտնվող, բնակավայրի միակ կամ մեկուսացված բնակավայրերի դպրոցները (այլ դպրոցից կամ բնակավայրից բանուկ ճանապարհով առնվազն 5 կմ հեռու գտնվող):

ՀՀ Կառավարության 2001 թ. օգոստոսի 25-ի N 773 որոշմամբ «պաշտպանված» դպրոցների ցանկում ընդգրկվեց սահմանափակ թվով՝ ընդամենը 284 դպրոց: Սակայն վերը նշված կարգը, ըստ էության, նպատակային չգործեց, քանի որ դպրոցների լիազոր կառավարման մարմինները կամ հենց դպրոցները, հասկանալով, որ «պաշտպանված» դառնալու պարագայում հատկացվող գումարն էապես ավելանում է, սկսեցին ջանքեր գործադրել պաշտպանվածների ցանկում ներառվելու նպատակով:

Փաստորեն, հետագայում ըստ սովորողների թվի բանաձևով չֆինանսավորվող դպրոցների թիվը տարեցտարի սկսեց ավելացվել: Վեց տարվա ընթացքում «պաշտպանված» դպրոցների թիվն աճեց 1,5 անգամ և 2006 թվականին կազմեց հանրակրթական դպրոցների շուրջ 30%-ը՝ 403 դպրոց: Դրա-

նով իսկ խախտվեցին սովորողների թվով ֆինանսավորման համակարգի նպատակները և դրա հիմքում առկա տրամաբանությունը:

Այսպիսով՝ 2007 թվականի հունվարի 1-ից դպրոցների ֆինանսավորման երկու տարբեր մեխանիզմների կիրառումը դադարեցվեց, և հանրապետության բոլոր, այդ թվում՝ «պաշտպանված» դպրոցների ֆինանսավորումն իրականացվեց բանաձևով:


Բացի այդ, բանաձևից հանվեցին մինչ այդ լեռնային ու բարձրլեռնային բնակավայրի դպրոցների պահպանման ծախսերի նկատմամբ կիրառվող գործակիցները, և դրանք գործադրվեցին միայն մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ (համապատասխանաբար՝ 1,02 և 1,2):

Աղյուսակ 2-ում ներկայացված են ըստ սովորողների թվի ֆինանսավորման անցած, սովորողների թվով չֆինանսավորվող և «պաշտպանված» դպրոցների թվերը՝ ըստ տարիների, իսկ գծապատկեր 4-ում նույն տվյալներն ավելի ակնառու են:

Աղյուսակ 2

Սովորողների թվով ֆինանսավորվող, սովորողների թվով չֆինանսավորվող և «պաշտպանված» դպրոցների թիվը 2001–2007 թթ.

| Տարեթիվ   | 1999 | 2000  | 2001  | 2002  | 2003  | 2004  | 2005  | 2006  | 2007 |
|---|------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|------|
| Դպրոցների ընդհանուր թիվը                                    | 1407 | 1407  | 1389  | 1392  | 1392  | 1359  | 1354  | 1362  | 1362 |
| Բանաձևով ֆինանսավորվող դպրոցների թիվը                       |      | 154   | 200   | 301   | 506   | 792   | 953   | 959   | 1362 |
| Բանաձևով չֆինանսավորվող դպրոցների թիվը                      |      | 1253  | 905   | 799   | 551   | 232   | 0     | 0     | 0    |
| Պաշտպանված դպրոցների թիվը                                   |      |       | 284   | 292   | 335   | 335   | 401   | 403   | 0    |
| Բանաձևով ֆինանսավորվող դպրոցների տոկոսային արտահայտությունը |      | 10.9% | 14.4% | 21.6% | 36.4% | 58.3% | 70.4% | 70.4% | 100% |



Գծապատկեր 4. Սովորողների թվով ֆինանսավորվող, սովորողների թվով չֆինանսավորվող և «պաշտպանված» դպրոցների թիվը 2001–2007 թթ.

### 9. Ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևում տարիների ընթացքում կատարված փոփոխությունների վերլուծությունը

2007 թվականից հետո ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնց մանրամասն վերլուծությունը, ըստ տարիների, ներկայացվում է ստորև:

#### 9.1. 2007 թվական

Նախ՝ ինչպես արդեն նշվել է, 2007 թվականին «պաշտպանված» դպրոցների ֆինանսավորումը ևս սկսեց իրականացվել բանաձևով: Սակայն այդ դպրոցների ֆինանսական վիճակը չվատթարացնելու նպատակով պետության կողմից սահմանվեց խոցելի դպրոցների նոր խումբ՝ տվյալ բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցներ, և որոշվեց դրանց հատկացվող գումարի հաշվարկման ժամանակ բանաձևում մեկ սովորողին բաժին ընկնող գումարի նկատմամբ կիրառել լրացուցիչ 1,2 գործակից:

Գործակիցի կիրառումը տվյալ բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների պարագայում պայմանավորված էր նրանով, որ դրանք հիմնականում թերբեռնված էին, ուստի չէին ապահովում դասարանների միջին խտության ու լրիվ ուսուցչական դրույքի համար սահմանված պետական նորմատիվները: Ավելին, լինելով տվյալ բնակավայրի միակ դպրոցը, նշված խմբի դպրոցները չունեին իրենց սովորողների թիվն ավելացնելու հնարավորություն՝ բնակավայրում դպրոցական տարիքի երեխաների սահմանափակ թվի պատճառով: Իրատեսական չէր համարվում նաև հարևան համայնքների դպրոցների հետ միավորելու ճանապարհով այս դպրոցների սովորողների թվի ավելացման և թերբեռնվածության հարցի լուծումը, քանի որ դրանք հիմնականում գտնվում էին մեկուսացված, սահմանամերձ կամ լեռնային բնակավայրերում, և, հատկապես ծնռանը, երեխաների տեղափոխությունը դժվարանում էր (ճանապարհների դժվարանցանելի լինելու պատճառով):

Ըստ սովորողների թվի ֆինանսավորման համակարգում մեկ այլ փոփոխություն կատարվեց ՀՀ Կառավարության 2006 թվականի որոշմամբ<sup>7</sup>, որը սկսեց գործել 2007 թվականի հունվարից:

Համաձայն այդ որոշման՝ բոլոր դպրոցները շարունակում էին ֆինանսավորվել  $Dq = U\beta \times U\alpha + \text{Պգ}$  բանաձևով, սակայն ՀՀ Կառավարությունը թույլ տվեց ըստ ենթակայության դպրոցների կառավարման լիազոր մարմնին՝ կրթության և գիտության նախարարությանը, մարզպետարաններին ու Երևանի քաղաքապետարանին, սահմանված կարգով կատարել վերաբաշխումներ իրենց ենթակայության դպրոցների ծախսերում: Մասնավորապես՝ թույլատրվեցին հետևյալ վերաբաշխումները.

1. տվյալ բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող այն դպրոցների մասով, որոնց մեկ սովորողի հաշվով կատարվող ծախսերը, բանաձևի կիրառման արդյունքում, աճել են ավելի մեծ կամ նվազ չափերով, քան տվյալ կառավարման մարմնի ենթակայության դպրոցների մեկ սովորողի հաշվով ծախսերի միջին աճն է նախորդ տարվա համեմատությամբ,

<sup>7</sup>Տե՛ս ՀՀ Կառավարության 24.08.2006 թ. N1262-Ն որոշումը «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

2. փոքր համակազմով (մինչև 100 աշակերտ ունեցող) և տվյալ կառավարման մարմնի ենթակայության դպրոցների մեկ սովորողի հաշվով ծախսերի՝ նախորդ տարվա համեմատությամբ միջին աճից նվազ աճ ունեցող դպրոցների միջև՝ բանաձևով և ըստ համալրված դասարանների թվի հաշվարկված գումարի տարբերության չափով:

Համաձայն նշված կարգի՝ վերաբաշխման ենթակա գումարն առանձնացվում է ավելի մեծ աճ ունեցող դպրոցների ծախսերից, իսկ գումարը չբավականացնելու դեպքում՝ համամասնորեն բոլոր դպրոցների ծախսերից:

Միաժամանակ, բանաձևի կիրառման արդյունքում, դպրոցներին հատկացվող բյուջետային ծախսերի համաչափությունն ապահովելու նպատակով, պետական կառավարման մարմիններին թույլատրվեց, անհրաժեշտության դեպքում, իրենց ենթակայության դպրոցների ծախսերում կատարել սահմանափակ գումարի չափով վերաբաշխումներ:

*Պետք է նշել, որ այս որոշմամբ փորձ կատարվեց՝ լուծելու առանձին դպրոցների ֆինանսական խնդիրները: Սակայն դա, փաստորեն, նահանջ էր ֆինանսավորման նոր համակարգի նպատակներից, քանի որ ըստ սովորողների թվի ֆինանսավորումն ուղղված էր նաև պետական բյուջեի միջոցների հաշվարկման ու բաշխման գործընթացի թափանցիկության աստիճանի բարձրացմանը, բանակցությունների վրա ծախսվող ժամանակի կրճատմանը, ինչպես նաև սուբյեկտիվ գործոնների ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Վերաբաշխումներ կատարելու հնարավորությունը կրկին մեծացրեց սուբյեկտիվ գործոնների դերը:*

## 9.2. 2012 թվական

Տարիների ընթացքում ակնհայտ դարձավ, որ մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի չափը պետք է տարբերակվի ըստ կրթական աստիճանների, քանի որ տարրական, միջին և ավագ դասարաններում մեկ սովորողի վրա կատարվող տարեկան ծախսերը տարբեր են: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դասավանդվող առարկաների, հետևաբար՝ ուսուցիչների թիվը տարրական, միջին և ավագ դպրոցներում նույնպես տարբեր է, ինչը հանգեցնում է աշխատավարձային ֆոնդի զգալի տարբերությունների:

Բացի այդ, 2008 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հանրապետությունում սկսեց ձևավորվել առանձին գործող ավագ դպրոցների ցանց, և բանաձևում մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ ավագ դպրոցների համար կիրառվեց լրացուցիչ գործակից<sup>8</sup>:

Այսպիսով՝ 2012 թվականից ՀՀ կրթության և գիտության, ինչպես նաև ֆինանսների նախարարների համատեղ հրամանով<sup>9</sup> հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ աստիճանների համար հաստատվեցին նոր գործակիցներ՝ մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ: Մասնավորապես՝ 2012 թ. բանաձևի հաշվարկը կատարելիս կիրառվեցին հետևյալ գործակիցները. տարրական աստիճան՝ 0,793, միջին՝ 1,102 և ավագ՝ 1,141:

<sup>8</sup> Տես ՀՀ կառավարության 27.03.2008 թ. N12 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը»:

<sup>9</sup> Տես ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 14-ի N992-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N1313-Ն համատեղ հրամանը «2012 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:

**9.3. 2013 թվական**

2013 թվականին ՀՀ կրթության և գիտության, նաև ֆինանսների նախարարների համատեղ հրամանով ֆինանսավորման բանաձևում կիրառվող գործակիցները վերանայվեցին. տարրական աստիճան՝ 0,7986, միջին՝ 1,1101, ավագ՝ 1,15<sup>10</sup>:

Միաժամանակ, շարունակեցին կիրառել լրացուցիչ գործակիցներ բարձրլեռնային, լեռնային բնակավայրերի, տվյալ բնակավայրի միակ և մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար: Նշված հրամանի համաձայն՝ մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարը բարձրլեռնային բնակավայրերի դպրոցների համար բազմապատկվեց 1,21 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1,03 գործակցով, տվյալ բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1,2 գործակցով, իսկ ավագ դպրոցների համար՝ 1,11 գործակցով:

*Հարկ է նշել, որ, ի սկզբանե, բանաձևի թույլ կողմերից էր այն հանգամանքը, որ մեկ սովորողին հատկացվող գումարի չափը նույնական էր միջնակարգ կրթության բոլոր երեք՝ տարրական, միջին և ավագ աստիճանների պարագայում: Մինչդեռ երեխայի կրթության արժեքը դրանցից յուրաքանչյուրում տարբեր է, քանի որ հենքային ուսումնական պլանով սահմանված առարկաները, դրանց դասավանդման ուսուցչական ժամերի քանակը և, դրանով պայմանավորված, ուսուցիչների աշխատավարձի գծով անհրաժեշտ ծախսերը տարրական, միջին և ավագ դպրոցներում տարբեր են: 2013 թվականից բանաձևին առնչվող այս խնդիրը որոշակիորեն լուծում ստացավ: Արդյունքում՝ ներկայումս գործող բանաձևում մեկ սովորողին հատկացվող գումարը տարբերակվում է միջնակարգ կրթության երեք աստիճանների դեպքում, ինչը, ոչ լիովին, բայց արտահայտում է տարրական, միջին և ավագ դպրոցում մեկ սովորողի վրա կատարվող փաստացի ծախսերի տարբերությունը:*

Աղյուսակ 3-ում ներկայացված է ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի բոլոր բաղադրիչների և դրանում կիրառված գործակիցների 2012 և 2013 թվականների արժեքների մասին ամփոփ տեղեկատվություն:

**Աղյուսակ 3**

**Ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի՝ 2012 և 2013 թվականների գործակիցների արժեքները**

|  | 2012 թ.              | 2013 թ.              | 2012 և 2013 թթ. գումարների միջև տարբերություն |
|--|----------------------|----------------------|---|
|  | Գումար               | Գումար               |   |
| <b>ՊՁ՝ պահպանման ծախսերի տարեկան գումար</b>        | 16708.0<br>հազ. դրամ | 16876.0<br>հազ. դրամ | 168000 դրամ                                   |
| <b>ՍՁ՝ 1 սովորողին բաժին ընկնող տարեկան գումար</b> | 106290 դրամ          | 111235 դրամ          | 4945 դրամ                                     |

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի N1077-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N1135-Ն համատեղ հրամանը «2013 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:

**Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող գործակիցները՝ ըստ կրթական աստիճանների (Պորժակից x Ագ=Ագ<sub>1</sub>)**

| Կրթական աստիճան | Պորժակից | Գումար (Ագ <sub>1</sub> ) | Պորժակից | Գումար (Ագ <sub>1</sub> ) | 2012 և 2013 թթ. գումարների միջև տարբերություն |
|-----------------|----------|---------------------------|----------|---------------------------|---|
|                 | 2012 թ.  |                           | 2013 թ.  |                           |   |
| Տարրական        | 0,793    | 84288 դրամ                | 0,7986   | 88832 դրամ                | 4544.3 դրամ                                   |
| Միջին           | 1,102    | 117131.6 դրամ             | 1,1101   | 123482 դրամ               | 6350.4 դրամ                                   |
| Ավագ            | 1,411    | 121276.9 դրամ             | 1,15     | 127920.25 դրամ            | 6643.4 դրամ                                   |

**Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցները՝ կախված դպրոցի գտնվելու վայրից՝ ըստ կրթական աստիճանների (Լրացուցիչ գործակից x Ագ<sub>1</sub> = Ագ<sub>2</sub>)**

| Լեռնային բնակավայրերի դպրոցներ | Լրացուցիչ գործակից | Լրացուցիչ գումար (Ագ <sub>2</sub> - Ագ <sub>1</sub> ) | Լրացուցիչ գործակից | Լրացուցիչ գումար (Ագ <sub>2</sub> - Ագ <sub>1</sub> ) | 2012 և 2013 թթ. գումարների միջև տարբերություն |
|--------------------------------|--------------------|---|--------------------|---|---|
|                                | 2012 թ.            |   | 2013 թ.            |   |   |
| Կրթական աստիճան                |                    |   |                    |   |   |
| Տարրական                       | 1,02               | 1685.8 դրամ   | 1,03               | 2665.0 դրամ   | 979.21 դրամ                                   |
| Միջին                          | 1,02               | 2342.6 դրամ   | 1,03               | 3704.5 դրամ   | 1361.8 դրամ                                   |
| Ավագ                           | 1,02               | 2425.5 դրամ   | 1,03               | 3837.6 դրամ   | 1412.1 դրամ                                   |

| Բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներ | Լրացուցիչ գործակից | Լրացուցիչ գումար (Ագ <sub>1</sub> - Ագ <sub>2</sub> ) | Լրացուցիչ գործակից | Լրացուցիչ գումար (Ագ <sub>1</sub> - Ագ <sub>2</sub> ) | 2012 և 2013 թթ. գումարների միջև տարբերություն |
|-------------------------------------|--------------------|---|--------------------|---|---|
|                                     | 2012 թ.            |   | 2013 թ.            |   |   |
| Կրթական աստիճան                     |                    |   |                    |   |   |
| Տարրական                            | 1,2                | 16857.6 դրամ  | 1,21               | 18654.8 դրամ  | 1797.2 դրամ                                   |
| Միջին                               | 1,2                | 2346.3 դրամ   | 1,21               | 25931.2 դրամ  | 2504.9 դրամ                                   |
| Ավագ                                | 1,2                | 24255.4 դրամ  | 1,21               | 26863.3 դրամ  | 2607.9 դրամ                                   |

| Բնակավայրի միակ, մինչև 400 աշ. ունեցող դպրոցներ | Լրացուցիչ գործակից | Լրացուցիչ գումար (Ագ <sub>1</sub> - Ագ <sub>2</sub> ) | Լրացուցիչ գործակից | Լրացուցիչ գումար (Ագ <sub>1</sub> - Ագ <sub>2</sub> ) | 2012 և 2013 թթ. գումարների միջև տարբերություն |
|---|--------------------|---|--------------------|---|---|
|   | 2012 թ.            |   | 2013 թ.            |   |   |
| Կրթական աստիճան                                 |                    |   |                    |   |   |
| Տարրական  | 1,2                | 16857.6 դրամ  | 1,2                | 17766.5 դրամ  | 908.86 դրամ                                   |
| Միջին   | 1,2                | 23426.3 դրամ  | 1,2                | 24696.4 դրամ  | 1270.1 դրամ                                   |
| Ավագ  | 1,2                | 24255.4 դրամ  | 1,2                | 25584.1 դրամ  | 1328.7 դրամ                                   |

**Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցը ավագ դպրոցների պարագայում**

| Ավագ դպրոցներ | 2012 թ.            |                  | 2013 թ.            |                  | 2012 և 2013 թթ. գումարների միջև տարբերություն |
|---------------|--------------------|------------------|--------------------|------------------|---|
|               | Լրացուցիչ գործակից | Լրացուցիչ գումար | Լրացուցիչ գործակից | Լրացուցիչ գումար |   |
|               | 1,15               | 18191.5 դրամ     | 1,11               | 14071.2 դրամ     | -4120.3 դրամ                                  |

#### 9.4. 2014 թվական

Մինչև 2014 թվականը, այնուամենայնիվ, շատ կարևոր մի խնդիր այդպես էլ լուծում չստացավ. այն է՝ աշակերտների փոքր թիվ ունեցող դպրոցներում մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը շարունակում էր մնալ անհամեմատ ավելի մեծ, քան աշակերտների մեծ թիվ ունեցող դպրոցներում: Ինչպես նշվեց վերը, այդ իրավիճակը պայմանավորված էր նրանով, որ բանաձևի ազատ անդամը՝ դպրոցի պահպանման ծախսը (Պգ-ն),

համեմատաբար մեծ հաստատուն գումար էր և տարբերակված չէր ըստ դպրոցների չափերի (սովորողների թվի):

2014 թվականին ՀՀ Կառավարության հունվարի 16-ի N16-Ն որոշմամբ<sup>11</sup> վերանայվեց ոչ միայն դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարի չափը, այլ նաև հաշվարկման սկզբունքը: Դա պայմանավորվեց դպրոցի սովորողների թվով և ոչ ուսուցչական անձնակազմի տարեկան աշխատավարձային ֆոնդով:

Մասնավորապես՝ **100 և պակաս թվով աշակերտ** ունեցող դպրոցների համար պահպանման ծախսերի նվազագույն գումարը սահմանվեց 16876.0 հազ. դրամ՝ ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը:

**101 և ավելի աշակերտ** ունեցող դպրոցների համար սահմանվեց հետևյալ 2 մասից կամ բաղադրիչից բաղկացած պահպանման ծախսերի ընդհանուր գումարը.

1. դպրոցի պահպանման ծախսեր՝ 3239.1 հազ. դրամ,

2. ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդ՝ ելնելով դպրոցի աշակերտների թվից:

Ընդ որում, սահմանվեց, որ ոչ ուսուցչական հաստիքների նվազագույն թիվը կազմում է.

- 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 9 հաստիք,
- 101–300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 12 հաստիք,
- 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 15,5 հաստիք:

Բացի այդ, 2014 թվականի բանաձևում շարունակում էին կիրառվել մի շարք գործակիցներ, որոնք ամփոփ կերպով ներկայացված են աղյուսակում.

**Աղյուսակ 4**

**2014 թվականի բանաձևում մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցներ**

| <i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցներ՝ ըստ կրթական աստիճանների</i>   |         |
|--|---------|
| Տարրական   | 0,80161 |
| Միջին  | 1,11424 |
| Ավագ   | 1,15432 |
| <i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակիցներ՝ ըստ դպրոցի գտնվելու վայրի</i> |         |
| Բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներ  | 1,13    |
| Լեռնային բնակավայրերի դպրոցներ   | 1,05    |
| Բնակավայրի միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցներ  | 1,2     |
| <i>Մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի նկատմամբ կիրառվող լրացուցիչ գործակից ավագ դպրոցների համար</i>          |         |
| Ավագ դպրոցներ  | 1,14    |

<sup>11</sup> Տես ՀՀ Կառավարության 16.01.2014 թ. N16-Ն որոշումը «ՀՀ Կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»:



2014 թվականի բանաձևում<sup>12</sup> մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարը սահմանվեց 121097 դրամի չափով: Աղյուսակ 5-ում ներկայացված է 2014 թվականի բանաձևով դպրոցին հատկացվող գումարի հաշվարկը՝ ըստ աշակերտների տարբեր թվաքանակ ունեցող դպրոցների: Հարկ է նշել, որ հաշվարկները կատարված են աշխատավարձերի միջին հանրապետական հաշվարկային չափերով, որոնք յուրաքանչյուր մարզի և Երևանի համար սահմանվում են որոշ տարբերություններով (ինդեքսավորում):

### Աղյուսակ 5


#### 2014 թվականի բանաձևի հաշվարկը սովորողների տարբեր թվաքանակ ունեցող դպրոցների համար՝ համապատասխան գործակիցների կիրառմամբ

| 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցներ        |                      |                       |   |      |                    |                           |
|--|----------------------|-----------------------|---|------|--------------------|---------------------------|
| Սզ x գործակից + Պզ                               |                      |                       | Ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդի հաշվարկ |      |                    |                           |
| Կրթական աստիճան                                  | Սզ x գործակից        | Պզ                    | Պզ-ն հաստիքների թվից կախված չէ                              |      |                    |                           |
| Տարրական   | 121097x0,80161       | +Պզ                   |   |      |                    |                           |
| Հիմնական   | 121097x1,11424       |                       |   |      |                    |                           |
| Ավագ   | 121097x1,15432       |                       |   |      |                    |                           |
| <b>Պզ = 16876.0 հազ. դրամ</b>                    |                      |                       |   |      |                    |                           |
| 101–300 աշակերտ ունեցող դպրոցներ                 |                      |                       |   |      |                    |                           |
| Սզ x Գործակից + Պզ                               |                      |                       | Ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդի հաշվարկ |      |                    |                           |
| Կրթական աստիճան                                  | Սզ (դրամ) x գործակից | Պզ (հազ. դրամ)        | Հաստիքներ   | Թիվ  | Անս. աշխատ. (դրամ) | Տարեկ. աշխատ. (հազ. դրամ) |
| Տարրական   | 121097x0,80161       | +Պզ                   | Տնօրեն  | 1    | 174800             | 2097.6                    |
| Հիմնական   | 121097x1,11424       | Պզ = 3239.1 +         | Փոխտնօրեն   | 1    | 174800             | 209.6                     |
| Ավագ   | 121097x1,15432       | ոչ ուսուցչ. աշխ. ֆոնդ | Հաշվապահ  | 1    | 133700             | 1604.4                    |
|  |                      |                       | Ուսումնասօժ.  | 9    | 66990              | 7234.9                    |
|  |                      |                       | Ընդամենը  | 12   |                    | 13034.5                   |
| <b>Պզ = 3239.1 + 13034.5 = 16273.6 հազ. դրամ</b> |                      |                       |   |      |                    |                           |
| 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցներ             |                      |                       |   |      |                    |                           |
| Սզ x Գործակից + Պզ                               |                      |                       | Ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդի հաշվարկ |      |                    |                           |
| Կրթական աստիճան                                  | Սզ (դրամ) x գործակից | Պզ (հազ. դրամ)        | Հաստիքներ   | Թիվ  | Անս. աշխատ. (դրամ) | Տարեկ. աշխատ. (հազ. դրամ) |
| Տարրական   | 121097x0,80161       | +Պզ                   | Տնօրեն  | 1    | 174800             | 2097.6                    |
| Հիմնական   | 121097x1,11424       | Պզ = 3239.1 +         | Փոխտնօրեն   | 1    | 174800             | 4195.2                    |
| Ավագ   | 121097x1,15432       | ոչ ուսուցչ. աշխ. ֆոնդ | Հաշվապահ  | 1    | 133700             | 1604.4                    |
|  |                      |                       | Ուսումնասօժ.  | 11,5 | 66 990             | 9244.6                    |
|  |                      |                       | Ընդամենը  | 15,5 |                    | 17141.8                   |
| <b>Պզ = 3239.1 + 17141.8 = 20380.9 հազ. դրամ</b> |                      |                       |   |      |                    |                           |

Տարիների ընթացքում բանաձևում կատարված փոփոխությունների, ինչպես նաև կառավարման լիազոր մարմնին դպրոցների ծախսերում վերաբաշխումներ կատարելու լիազորություն վերապահելու արդյունքում վերջիններիս հատկացվող տարեկան գումարի և սովորողների թվի միջև կապը դարձրեց ինել գծային:

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարի 20.01.2014 թ. N51-Ն և ՀՀ ԿԳ նախարարի 20.01.2014 թ. N35-Ն համատեղ հրամանը «2014 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:

Գծապատկեր 5-ում կապույտ գծով պատկերված է 2014 թվականին առանձին դպրոցներին փաստացի հատկացված տարեկան գումարի և սովորողների թվի միջև կապը՝ ըստ Երևան քաղաքի դպրոցների: Ինչպես երևում է գծապատկերից, թեև այդ կապը ձգտում է ուղիղ գծի, առանձին դպրոցների պարագայում առկա են զգալի շեղումներ:



**Գծապատկեր 5.** 2014 թվականին առանձին դպրոցներին հատկացված տարեկան փաստացի ընդհանուր գումարի և սովորողների թվի միջև կապը՝ ըստ Երևան քաղաքի դպրոցների


**9.5. Փոքր դպրոցներում մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը**

Ինչպես վերը նշվեց, դպրոցին հատկացվող տարեկան ընդհանուր գումարի և սովորողների թվի հարաբերությամբ ստացվում է մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը:

Դպրոցի պահպանման ծախսերի գումարը սովորողների թվից և ոչ ուսուցչական անձնակազմի տարեկան աշխատավարձային ֆոնդից կախման մեջ դնելը միայն մասամբ լուծեց այն խնդիրը, որ մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցներում մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարն անհամեմատ ավելի մեծ էր, քան մեծ դպրոցներում: Մասնավորապես՝ խնդիրը լուծվեց միայն 101–300 աշակերտ ունեցող փոքր դպրոցների համար: Արդյունքում՝ 100-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցների պարագայում մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարը սկսեց նվազել սովորողների թվի աճին գրեթե համաչափ: Սակայն խնդիրը մնաց չլուծված մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների համար:

Այսպես՝ 2014 թվականին Երևանի դպրոցներին հատկացված տարեկան գումարների վերլուծությունը ցույց տվեց, որ մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարը մոտ 260000 դրամ էր՝ 100 աշակերտ ունեցող դպրոցների և մոտ 126000 դրամ՝ 1500-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցների պարագայում: 2014 թվականին մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի միջին չափը Երևանի 101–1600 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար կազմում էր մոտ 163000 դրամ:

Գծապատկեր 6-ում պատկերված է 2014 թվականին Երևան քաղաքի 100-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափի և սովորողների թվի կապը:



**Գծապատկեր 6.** 2014 թվականին 100-ից ավելի աշակերտ ունեցող երևանի դպրոցներում մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափի կախումը սովորողների թվից՝ ելնելով փաստացի հատկացված տարեկան գումարներից

Այսպիսով՝ 100-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցների պարագայում, սովորողների թվի նույնիսկ 15 անգամ աճի դեպքում, մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը նվազում է ընդամենը 1,6 անգամ:

100 և պակաս թվով աշակերտների դեպքում դպրոցի պահպանման ծախսերի ընդհանուր գումարը սովորողների թվից ու ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձային ֆոնդից կախման մեջ չդրվեց և մնաց հաստատուն թիվ՝ 16876.0 հազ. դրամ: Ըստ այդմ՝ այդ դպրոցներում մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը կրկին մնաց անհամեմատ ավելի մեծ, քան 100-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցների պարագայում, ընդ որում՝ այն կտրուկ աճում է սովորողների թվի նվազմանը զուգընթաց:


**Աղյուսակ 6**

**Մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցների համար՝ ըստ 2014 թվականի բանաձևի**


| Սովորողների թիվը | Մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարը՝ առանց գործակիցների կիրառման (դրամ) | Մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի միջին արժեքը 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցների համար |
|------------------|---|---|
| 100              | 289857  | ~3336500 դրամ՝ միջինում   |
| 80               | 332048  |   |
| 50               | 458616  |   |
| 30               | 683630  |   |
| 20               | 964895  |   |
| 15               | 1246167   |   |
| 10               | 1808690   |   |
| 5                | 3496300   |   |
| 3                | 5746433   |   |
| 1                | 16997100  |   |

Աղյուսակ 6-ում տրված է մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի միջին չափը (առանց կրթական աստիճանների գործակիցների կիրառման) 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցներում՝ հաշվարկված 2014 թվականի բանաձևով: Աղյուսակից ակնհայտ երևում է, որ մեկ սովորո-

դին բաժին ընկնող իրական գումարի չափը սովորողների թվի նվազման դեպքում աճում է շատ կտրուկ. 289857 դրամից (100 աշակերտ ունեցող դպրոցների համար) մինչև 16997100 դրամի (1 աշակերտի դեպքում), այսինքն՝ մոտ 60 անգամ: 1–100 աշակերտ ունեցող դպրոցներում մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի միջինացված չափը կազմում է մոտ 3336500 դրամ՝ 20 անգամ ավելի, քան 101 և ավելի աշակերտ ունեցող դպրոցներում:



**Պճապատկեր 7.** Մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը աշակերտների տարբեր թվաքանակ ունեցող դպրոցների համար



**Պճապատկեր 8.** Մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափի կախումը դպրոցի աշակերտների թվից՝ 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցների համար

Պճապատկեր 7-ում պատկերված է մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափը աշակերտների տարբեր թվով ունեցող դպրոցների համար, որն ակնառու է դարձնում շատ փոքր (մինչև 100 աշակերտ ունեցող) և մնացած դպրոցների ֆինանսավորման տարբերությունները, իսկ Պճապատկեր 8-ում պատկերված է մեկ սովորողին բաժին ընկնող իրական գումարի չափի կախումը դպրոցի աշակերտների թվից՝ միայն 100 և պակաս թվով աշակերտ ունեցող դպրոցների համար\*:

\* Շարունակությունը՝ հաջորդ համարում:

### Օգտագործված գրականություն

1. Հարությունյան Կ., Մաղաքյան Հ., Հարությունյան Վ., Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի ներդրումն ու կիրառումը, «Մանկավարժություն», հ. 1, 2, Եր., 2012:
2. Հարությունյան Կ., Մաղաքյան Հ., Հարությունյան Վ., Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի բարելավման ուղղությամբ առաջարկություններ, «Մանկավարժություն», հ.4, Եր., 2012:
3. Հարությունյան Կ., ՀՀ հանրակրթության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղությունների վերլուծությունը, «Մանկավարժություն», հ. 4, Եր., 2005:
4. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը, 1995:
5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, 2002:
6. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, 2008:
7. «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, 2012:
8. «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, 2013:
9. ՀՀ Կառավարության 28.10.1998 թ. N661 որոշումը «Պետական հանրակրթական դպրոցների համակարգի հետագա ապակենտրոնացման մասին»:
10. ՀՀ Կառավարության 01.06.1999 թ. N377 որոշումը «ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագիրը հաստատելու մասին»:
11. ՀՀ Կառավարության 12.10.2000 թ. N634 որոշումը «ՀՀ հանրակրթական համակարգի բարեփոխումների փորձնական ծրագրի հետագա ընթացքի մասին»:
12. ՀՀ Կառավարության 24.08.2006 թ. N1262-Ն որոշումը «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N773 որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին»:
13. ՀՀ Կառավարության 27.03.2008 թ. N12 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը»:
14. ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N954-Ն որոշումը «ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:
15. ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թ. դեկտեմբերի 14-ի N992-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. դեկտեմբերի 15-ի N1313-Ն համատեղ հրամանը «2012 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:
16. ՀՀ Կառավարության 16.01.2014 թ. N16-Ն որոշումը «ՀՀ Կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:
17. ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թ. դեկտեմբերի 7-ի N1077-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. դեկտ. 12-ի N1135-Ն համատեղ հրամանը «2013 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:

18. ՀՀ ֆինանսների նախարարի 20.01.2014 թ. N51-Ն և ՀՀ ԿԳ նախարարի 20.01.2014 թ. N35-Ն համատեղ հրամանը «2014 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:
19. ՀՀ ֆինանսների նախարարի 11.12.2015 թ. N 886-Ն և ՀՀ ԿԳ նախարարի 17.12.2015 թ. N1041-Ն համատեղ հրամանը «2016 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին»:
20. Alonso J., Sánchez A., Reforming Education Finance in Transition Countries: Six Case Studies in Per Capita Financing Systems. World Bank, Washington, D.C., 2011.
21. Ross K., Levačić R., Need-Based Resource Allocation in Education: Via Formula Funding of Schools. International Institute for Education Planning, UNESCO, Paris, 1999.
22. Levačić R., Downes P., Formula Funding of Schools, Decentralization and Corruption: A Comparatative Study, International Institute for Education Planning, UNESCO, Paris, 2004.
23. The World Bank, Per Capita Financing of Education in RF: Experience and Issues. Policy Note, Edition I, Moscow, 2004.
24. Финансирование школьного образования в Российской Федерации: опыт и проблемы (Серия “Актуальные вопросы развития образования”), М., Издательство Алекс, 2004.
25. Fiszbein A. (editor). Decentralizing Education in Transition Societies: Case Studies from Central and Eastern Europe, World Bank Institute, World Bank, Washington D.C., 2001.

**КАРИНЕ АРУТЮНЯН**

*Заместитель министра образования и науки Республики Армения,  
кандидат физико-математических наук*

***Теоретические основы, принципы и методология подушевого финансирования общеобразовательных школ: анализ опыта Армении.*** – Начиная с 1998 года

внедрение нового механизма подушевого финансирования государственных общеобразовательных школ стало составляющей частью структурных реформ в области общего среднего образования Республики Армения. Путем внедрения данного механизма был совершен переход от финансирования государственных школ по экономическим статьям государственного бюджета к финансированию единой суммой, согласно которой выделенная школе годовая сумма рассчитывается по определенной формуле, исходя из числа учеников (подушевое финансирование) и расходов, необходимых для содержания школы.

В данной статье представлены теоретические основы, принципы и методология финансирования общеобразовательных школ по формуле, а также обобщены результаты исследования международного опыта по внедрению и применению нового механизма финансирования.

В статье рассмотрены цели, задачи, основные принципы, методология разработки и ожидаемые результаты внедрения подушевого финансирования в Армении. По результатам анализа почти двадцатилетнего опыта применения формулы выявлены преимущества ее применения и проблемы. Разработаны предложения по дальнейшему улучшению формулы.

**Ключевые слова:** *система образования, формула финансирования, подушевое финансирование, финансирование исходя из потребностей, принципы финансирования, качество образования, общеобразовательная школа, эффективность школы, число учеников, величина школы, местонахождение школы, расходы на текущее содержание школ, национальные меньшинства.*

JEL: I21, I22, I25, C13, H52, H75

**KARINE HARUTYUNYAN**

*Deputy Minister of Education and Science of the Republic of Armenia,  
PhD in Physics and Mathematics*

*Theoretical Grounds, Principles and Methodologies of Per Capita Funding of General Schools: Analysis of the Armenian Experience.*

Since 1998 the integral part of the structural reforms implemented in the general education system of Armenia was the introduction of a new per capita funding mechanism of public schools. This mechanism allowed to make a transition from State Budget's line item funding to a lump sum funding principle of schools. Accordingly, the annual amount allocated to individual schools is calculated by a formula, which is based on the number of students and school maintenance expenses.

This article presents the theoretical framework, principles and methodology of the formula funding of schools, as well as the summary of findings from the international experience of funding schools via these formulas.

The article also explores the overall goal, objectives, methodology, main principles and expected outcomes of introducing per capita formula funding of public schools in Armenia. It presents the main advantages as well as problems and issues of formula funding revealed during almost 20 years of its application. Recommendations for further development of the funding formula are provided.

**Key words:** *education system, funding formula, per capita funding, need based funding, funding principles, quality of education, general school, school efficiency, number of students, school size, school location, school maintenance, national minorities.*

JEL: I21, I22, I25, C13, H52, H75